Մեկնարկել է «Ներուժ 4.0» ծրագրի հայտերի ընդունումը

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հայտարարում է «Ներուժ 4.0» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագրի հայտերի ընդունման մեկնարկը:

2023 թվականի հուլիսի 4-ին մեկնարկել է «Ներուժ 4.0» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափերի ծրագրի հայտերի ընդունումը: Ծրագրով նախատեսվում է աշխարհի տարբեր երկրներում ապրող հայազգի ձեռներեցներից և առաջատար մասնագետներից բաղկացած թիմերին հրավիրել Հայաստան՝ տեխնոլոգիական սկսնակ ընկերություններ հիմնելու և զարգացնելու նպատակով՝ վերջիններիս տրամադրելով ֆինանսական, կրթական և խորհրդատվական աջակցություն:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի աշխարհի տարբեր ծայրերից շուրջ 40 թիմեր հրավիրվելու են Հայաստան՝ մասնակցելու Դիլիջանում կայանալիք 6-օրյա միջոցառմանը, ծանոթանալու Հայաստանում բիզնես վարելու առավելություններին, ստանալու համագործակցությունների և բացառիկ անհատական մենթորության հնարավորություն:

Միջոցառման շրջանակներում հանձնաժողովի որոշմամբ գաղափարի փուլում գտնվող թիմերից հաղթող ճանաչված 3 թիմեր կստանան 15, 10 և 5 մլն ՀՀ դրամ, իսկ պրոդուկտ ունեցող թիմերից հաղթող ճանաչված 3 թիմեր՝ մինչև 30, 20 և 10 մլն ՀՀ դրամ աջակցություն: Թիմերը հնարավորություն կտրվի ընդլայնել համագործակցային ցանցը, փոխանակվել գիտելիքներով և փորձով, ինչպես նաև շփվել աշխարհի ավելի քան 40 երկներից ժամանած մասնակիցների հետ:

Ստարտափը կարող է մասնակցել «Ներուժ» ծրագրին , եթե՝

1. ունի նախապես ձևավորված թիմ,
2. հիմնադիրը (կամ առնվազն համահիմնադիրների 50%-ը)

- ունի/ունեն հայկական ծագում,
- չի/չեն հանդիսանում ՀՀ քաղաքացի (բացառությամբ երկքաղաքացիների),
- վերջին 12 ամիսների ընթացքում չի/չեն բնակվել ՀՀ-ում կամ հայրենադարձվել է/են վերջին 6 ամիսների ընթացքում,

3. գտնվում է գաղափարի կամ պրոդուկտի մակարդակում,
4. գործում է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ճյուղերում (ճյուղերի բաշխվածությունը կարող եք տեսնել կայքում)
5. հայտը ներկայացնելու օրվան նախորդող վերջին 24 ամիսների ընթացքում չի ստացել դրամաշնորհ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից,
6. հիմնադիրը (համահիմնադիրները) ցանկանում է (են) Հայաստանում հիմնել և գրանցել իր (իրենց) ստարտափ Հայաստանում առնվազն 1 տարի:

Ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է անցնել հետևյալ հղմամբ և գրանցել տվյալները: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2023 թ. օգոստոսի 3-ը, ժամը 18:00-ն:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Դիլիջանում կայանալիք միջոցառմանը յուրաքանչյուր ստարտափից կարող է մասնակցել առավելագույնը 2 ներկայացուցիչ:

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵ՛Ք www.neruzh.am

The acceptance of applications for the "Neruzh 4.0" program has begun.

The Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia announces the launch of accepting applications for the "Neruzh 4.0" Diaspora technology startups program.

The Ministry of High-Tech Industry of Armenia implements the "Neruzh 4.0" state program, which aims to support Armenia's economic progress and the development of the startup ecosystem by promoting the repatriation of professionals from Armenian Diaspora.

As in previous years, this year, around 40 teams from around the world will be invited to Armenia to participate in the 6-day event in Dilijan, to get acquainted with the advantages of doing business in Armenia, to get an opportunity for cooperation and exclusive individual mentorship.

Within the framework of the event, 3 winning teams in the idea stage will receive 15, 10 and 5 million AMD, and 3 winning teams with a product will receive support of up to 30, 20 and 10 million AMD. Teams will have an opportunity to expand the collaborative network, exchange knowledge and experience, as well as to interact with participants from over 40 countries.

A startup can participate in the "Neruzh" program if:

• it has a pre-formed team,

• the founder of it (or at least 50% of the co-founders)

1. has/have Armenian origin,

2. is/are not RA citizens (except for dual citizens),

3. has/have not lived in RA in the last 12 months or has/have been repatriated in the last 6 months,

• it is at the idea or product level,

• Operates in the branches of the high-tech industry (the distribution of the branches can be seen on the website),

- it did not receive a grant from the RA Ministry of High-Tech Industry during the last 24 months prior to the date of submitting the application,
- the founder (co-founders) wants to establish and register his (their) startup in Armenia for at least 1 year.

To apply for the program, you need to go to the following link and register the data. Application deadline is 3rd of August 2023, 18:00

Note: Due to space limitations, only 2 members from each startup will be invited to participate in the program in Dilijan.

FOR MORE INFORMATION PLEASE VISIT www.neruzh.am